ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ
ARMENIAN AIRLINES

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններ և
Անկախ աուդիտորի եզրակացություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
6	Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
7	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
8	Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
9	Սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվություն
10	Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրությունների ցանկ
11	Ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող ծանոթագրություններ

Կազմակերպության գտնվելու վայրը	ՀՀ, Արմավիրի մարզ, գյուղ Փարաքար, Աբրահամյան փ. 19տ.
Իրավական ձևը՝	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Օդային տրանսպորտի գործունեություն
Տնօրեն՝	Արարատ Սարգսյան

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ
Աուդիտորական և խորհրդատվական ընկերություն
էլ.հասցե՝ consultgmllc@gmail.com, վեբ կայք՝ www.gmconsult.am, հեռ.՝ +37441451172

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» ՍՊԸ մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետև՝ «Ընկերություն») ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի, դրամական միջոցների հոսքերի և սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀՄԷՍԽ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ընկերության ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը, ընդհատել նրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը,

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի

բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանն դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը,

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

ք. Երևան, 25.06.2026թ.

ՋԻ ԷՄ ՔՈՆՍԱԼԹ ՍՊԸ

Գլխավոր տնօրեն՝ Գոհար Մարգարյան

Որակավորված աուդիտոր՝ Արփինե Խաչատրյան

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» ՍՊԸ

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Հասույթ	5	3,192,245	14,858,880
Ինքնարժեք	6	(6,267,668)	(12,473,058)
Համախառն շահույթ/(վնաս)		**(3,075,423)**	**2,385,822**
Այլ եկամուտ	7	1,725,814	22,029
Իրացման ծախսեր	8	(754,472)	(2,425,085)
Վարչական ծախսեր	9	(587,355)	(1,574,850)
Այլ ծախսեր	10	(25,216)	(29,540)
Գործառնական շահույթ/(վնաս)		**(2,716,652)**	**(1,621,624)**
Ֆինանսական ծախսեր	11	(1,135,784)	(1,158,604)
Այլ ֆինանսական արդյունք	12	(1,614,640)	654,290
Շահույթ/(վնաս) հարկումից առաջ		**(5,467,076)**	**(2,125,938)**
Շահութահարկի գծով (ծախս)/փոխհատուցում	13	846,523	496,833
Տարվա շահույթ		**(4,620,553)**	**(1,629,105)**
Այլ համապարփակ եկամուտ		-	-
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք		**(4,620,553)**	**(1,629,105)**

Ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են ղեկավարության կողմից 2026թ. հունիսի 25-ին:
11-31 էջերի ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների անբաժանելի մասը:

Աստղիկ Մարգարյան
Տնօրեն

Սիմոն Աբրահամյան
Հաշվապահ/որակավորված աուդիտոր

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» "АРМЯНСКИЕ АВИАЛИНИИ" "ARMENIAN AIRLINES" 02837242

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» ՍՊԸ
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	Ծնթ.	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Ակտիվներ			
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	14	470,759	488,561
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	15	48,843	580,706
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	16	8,039	156,103
		527,641	**1,225,370**
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ	17	92,956	5,120,847
Հետաձգված հարկային ակտիվներ	18	1,278,271	431,748
		1,371,227	**5,552,595**
Ընդամենը ակտիվներ		**1,898,868**	**6,777,965**
Պարտավորություններ			
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	19	9,313,684	5,097,396
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	20	789,591	2,228,734
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	21	18,667	1,877,018
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**10,121,942**	**9,203,148**
		10,121,942	**9,203,148**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	21	27,066	1,204,404
Հետաձգված հարկային պարտավորություն	18	-	-
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**27,066**	**1,204,404**
Ընդամենը պարտավորություններ		**10,149,008**	**10,407,552**
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		1	1
Կուտակված շահույթ		(8,250,141)	(3,629,588)
Ընդամենը սեփական կապիտալ	22	**(8,250,140)**	**(3,629,587)**
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**1,898,868**	**6,777,965**

Արարատ Սարգսյան
Տնօրեն

Սիմոն Աբրահամյան
Հաշվապահ/որակավորված աուդիտոր

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» ՍՊԸ
"АРМЯНСКИЕ АВИАЛИНИИ"
"ARMENIAN AIRLINES"
01837242

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» ՍՊԸ
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծնթ.	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Մուտքեր վաճառքների գծով		3,306,403	15,184,843
Վճարված աշխատավարձ		(281,865)	(906,445)
Վճարումներ մատակարարներին		(4,156,497)	(15,106,945)
Պետական բյուջեից ստացված դրամական միջոցներ		-	-
Վճարումներ պետական բյուջե		(526,785)	(1,390,565)
Այլ մուտքեր գործառնական գործունեությունից		15,539	51,924
Այլ ելքեր գործառնական գործունեությունից		(194,974)	(384,254)
Գործառնական գործունեությունից ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր		**(1,838,179)**	**(2,551,442)**
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռք բերումից ելքեր		-	(45)
Ստացված տոկոսներ		6	35
Տրված փոխառությունների մարումից մուտքեր		-	-
Տրված փոխառություններ		-	-
Չկապակցված ընկերության բաժնետոմսերի ձեռքբերումից ելքեր		-	-
Ներդրումային գործունեությունից ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցների հոսքեր		**6**	**(10)**
Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր			
Ստացված փոխառություններ		1,675,514	2,731,750
Ստացված փոխառությունների մարում		-	-
Ֆինանսավորման գործունեությամբ (օգտագործված)/ստացված զուտ դրամական միջոցներ		**1,675,514**	**2,731,750**
Դրամական միջոցների և դրանց համարժեքների զուտ (նվազում)/աճ		**(162,659)**	**180,298**
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 1-ը հունվարի	16	**156,103**	**35,222**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխման ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա		14,595	(59,417)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները առ 31 դեկտեմբերի	16	**8,039**	**156,103**

Արտուր Սարգսյան
Տնօրեն

Սիմոն Աբրահամյան
Հաշվապահ/որակավորված աուդիտոր

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» "АРМЯНСКИЕ АВИАЛИНИИ" "ARMENIAN AIRLINES" 02837242

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» ՍՊԸ
Սեփական կապիտալի փոփոխությունների մասին հաշվետվություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կանոնադրական կապիտալ հազ. դրամ	Կուտակված շահույթ հազ. դրամ	Ընդամենը սեփական կապիտալ հազ. դրամ
01.01.2024թ. դրությամբ	1	(2,000,483)	(2,000,482)
Տարվա շահույթ		(1,629,105)	(1,629,105)
31.12.2024թ. դրությամբ	1	(3,629,588)	(3,629,587)
Տարվա շահույթ		(4,620,553)	(4,620,553)
31.12.2025թ. դրությամբ	1	(8,250,141)	(8,250,140)

Արարատ Խաչատրյան
Տնօրեն

Սիմոն Աբրահամյան
Հաշվապահ/որակավորված աուդիտոր

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» "АРМЯНСКИЕ АВИАЛИНИИ" "ARMENIAN AIRLINES" 02837242

Բովանդակություն

1. Ընկերության մասին 11
2. Պատրաստման հիմքերը 12
3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ 12
4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում 13
5. Հասույթ 17
6. Ինքնարժեք 17
7. Այլ եկամուտ 17
8. Իրացման ծախսեր 17
9. Վարչական ծախսեր 18
10. Այլ ծախսեր 18
11. Ֆինանսական ծախսեր 18
12. Այլ ֆինանսական արդյունքներ 18
13. Շահութահարկ 19
14. Պաշարներ 19
15. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր 20
16. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ 20
17. Հիմնական միջոցներ 21
18. Հետաձգված հարկ 23
19. Վարկեր և փոխառություններ 24
20. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր 24
21. Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ 24
22. Սեփական կապիտալ 25
23. Կապակցված կողմեր 25
24. Պայմանական պարտավորություններ 26
25. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր 27
26. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն 27

1. Ընկերության մասին

Ընկերությունը և նրա հիմնական գործունեությունը

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱՈՒՂԻՆԵՐ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (Ընկերություն) առևտրային կազմակերպություն է, որը հիմնադրվել է 2021թ. փետրվարի 16-ին մասնակիցների ժողովի կայացրած որոշմամբ:

Ընկերությունը համարվում է շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ, որի կանոնադրական կապիտալը բաժանված է իր կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի:

Ընկերությունը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից 2021թ. փետրվարի 16-ին: Գրանցման համարն է 286.110.1163514, ՀՎՀՀ՝ 02837242:

Ընկերության գործունեության առարկան չվացուցակին ենթակա (չենթարկվող) օդային տրանսպորտի գործունեություն, օդային տրանսպորտի այլ օժանդակ գործունեություն իրականացնելու միջոցով շահույթի ստացումն է:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ունեցել է 169 աշխատակից, 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 164 աշխատակից:

Գործարար միջավայր

Հայաստանում իրականացվող քաղաքական և տնտեսական փոփոխությունները, ինչպես նաև իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը շարունակական բնույթ են կրում: Հայաստանի տնտեսության կայունությունը և զարգացումը մեծապես կախված է այս փոփոխություններից: Կառավարությունը հաստատել է արդյունավետ կառավարման իր հանձնառությունը, որը ենթադրում է հակակոռուպցիոն ջանքեր, թափանցիկություն և հաշվետվողականություն:

Իրավիճակը Հայաստանի Հանրապետությունում էլ ավելի է սրվել Ադրբեջանի Հանրապետության կողմից սանձազերծված պատերազմի արդյուքում: Չնայած կնքված զինադադարի համաձայնագրին՝ դեռևս անորոշ են պատերազմի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա թե կարճաժամկետ, և թե երկարաժամկետ առումներով:

2022թ. փետրվարի 24-ին Ուկրաինայում բռնկված հակամարտությունն արագությամբ ծավալվում է՝ զգալի ազդեցություն թողնելով աշխարհի վրա: ԱՄՆ-ն և եվրոպական երկրները կոշտ պատժամիջոցներ են կիրառել Ռուսաստանի Դաշնության դեմ: Արևմտյան երկրները քննարկում են գոյություն ունեցող պատժամիջոցների ընդլայնումը: Ռուսաստանի Դաշնությունը Հայաստանի Հանրապետության էական առևտրատնտեսական գործընկերն է, ուստի սույն ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ կիրառվող պատժամիջոցները, ինչպես նաև դրանց ընդարձակումը կարող են լուրջ ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական շուկաների և ամբողջ տնտեսության վրա: Համաշխարհային մակարդակով ավելի խոր պատժամիջոցներ կիրառելը կարող է հանգեցնել բարձր գնաճի, ֆինանսական շուկաների աճի տեմպի նվազման և որոշակի խաթարման:

Վերոնշյալ իրադարձությունները կարող են հետագայում էական ազդեցություն ունենալ Ընկերության ապագա գործունեության և ֆինանսական կայունության վրա, որոնց ամբողջական հետևանքները դժվար է կանխատեսել ներկա պահին: Ապագա տնտեսական և քաղաքական իրավիճակը և վերջիններիս ազդեցությունը Ընկերության գործունեության վրա կարող են տարբերվել Ընկերության ղեկավարության ներկա սպասումներից:

Ընկերության ղեկավարությունը գտնում է, որ իր ընթացիկ իրացվելիության վիճակը բավարար է կայուն գործունեության համար: Ընկերությունը պարբերաբար վերանայում է իր իրացվելիության մակարդակը և, անհրաժեշտության դեպքում, պատրաստ է կիրառել իրացվելիության աջակցության համապատասխան գործիքակազմ:

Տվյալ ֆինանսական հաշվետվությունները չեն արտացոլում վերը նկարագրվածի հնարավոր ապագա ազդեցությունը Ընկերության գործունեության վրա:

2. Պատրաստման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների, Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների (ՀՀՄՄ) և դրանց մեկնաբանությունների (հավաքականորեն՝ ՖՀՄՍ) պահանջներին համապատասխան:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 26-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:՝

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են Հայաստանի Հանրապետության դրամական միավորով (ՀՀ դրամ), որը նաև Ընկերության գործառնական արժույթն է:

Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են հաշվեգրման սկզբունքով և սկզբնական արժեքի մեթոդով, բացառությամբ որոշ ֆինանսական գործիքների, որոնք ներկայացված են ապագա դրամական հոսքերի ներկա զեղչված արժեքով և կենսաբանական ակտիվների, որոնք հաշվառվում են իրական արժեքով՝ հանած վաճառքի հետ կապված ծախսումները:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա) 2025թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

Առկա չեն 2025թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ, որոնք նշանակալի ազդեցություն են ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

բ) Հրապարակված, սակայն դեռևս չգործող ՖՀՄՍ-ների նոր ստանդարտներ և փոփոխություններ

Այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթվի դրությամբ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՍԽ) կողմից թողարկվել են որոշակի նոր ստանդարտներ, փոփոխություններ և մեկնաբանություններ գործող ստանդարտների վերաբերյալ, որոնք սակայն դեռևս չեն գործում և նախօրոք չեն ներդրվել Ընկերության կողմից:

Ղեկավարությունը կանխատեսում է, որ բոլոր կիրառելի հրապարակումները կներդրվեն Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունում սկսած հրապարակման ուժի մեջ մտնելու ամսաթվին հաջորդող առաջին իսկ ժամանակաշրջանից: Ընթացիկ տարում չկիրառված նոր ստանդարտները, փոփոխությունները և մեկնաբանությունները չեն բացահայտվել, քանի որ չի ակնկալվում, որ դրանք էական ազդեցություն կունենան Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա և ներկայացված են ստորև.

- Պարտավորությունների դասակարգում ընթացիկ և ոչ ընթացիկ դասերի և կովենանտներ ունեցող ոչ ընթացիկ պարտավորություններ (ՀՀՄՄ 1-ի փոփոխություններ)
- Մատակարարների ֆինանսավորման պայմանավորվածություններ (ՀՀՄՄ 7-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ)
- արձակալության գծով պարտավորությունը վաճառքի և հետադարձ վարձակալություն գործարքների դեպքում (ՖՀՄՍ 16-ի փոփոխություններ)
- Փոխանակման հնարավորության բացակայություն (ՀՀՄՄ 21-ի փոփոխություններ):

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական

տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրտումների պատճառ հանդիսանալ:

Գնահատումներ և ենթադրություններ

Անընդհատության սկզբունք

Ընկերությունն իրականացնում է իրացվելիության մշտական վերահսկողություն և կառավարում: Ընկերության ղեկավարությունն ունի հիմնավորված ակնկալիք, որ կարող է շարունակել իր գործառնական գործունեությունը տեսանելի ապագայում: Ուստի Ընկերությունը շարունակում է որդեգրել անընդհատության սկզբունքն իր ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետները հիմնված են ղեկավարության գնահատականների վրա և կարող են հետագայում փոփոխվել (տես Ծնթ. 26-ը): Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության ղեկավարությունը վերանայում և անհրաժեշտության դեպքում փոփոխում է հիմնական միջոցների մնացորդային օգտակար ծառայության ժամկետների վերաբերյալ գնահատումները:

Իրական արժեքի չափում

Ընկերության ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններում ներառված մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջում են չափումներ իրական արժեքով և/կամ իրական արժեքի բացահայտումով:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափումը հնարավորինս հիմնվում է դիտարկելի շուկայից ստացվող ելակետային տվյալների վրա: Իրական արժեքի չափումները սահմանելու համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող արդյունքները դիտարկելի («իրական արժեքի աստիճանակարգ»):

- Մակարդակ 1. Նույն ակտվների կամ պարտավորությունների գծով ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված)
- Մակարդակ 2: Դիտարկելի ուղղակի կամ անուղղակի ելակետային տվյալներ, Մակարդակ 1-ի տվյալներից տարբեր
- Մակարդակ 3: Ոչ դիտարկելի ելակետային տվյալներ (հիմնված չեն դիտարկվող շուկայի տվյալների վրա)

Իրական արժեքների աստիճանակարգում այն մակարդակը, որին դասվում է իրական արժեքի չափումը, պետք է որոշվի ամենացածր մակարդակի ելակետային տվյալի հիման վրա, որը նշանակալի է ամբողջությամբ վերցրած իրական արժեքի չափման համար: Իրական արժեքի տեղափոխությունները մի մակարդակից դեպի մյուսը ճանաչվում են այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի են ունենում այդ տեղափոխությունները:

4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Արտարժութային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին: Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել:

Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ֆինանսական գործիքների ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Առևտրային դեբիտորական պարտքեր,
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ,
- Ներդրումներ և ժամկետային ավանդներ,
- Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր,
- Ստացված վարկեր և փոխառություններ,

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկն առաջանում է այն դեպքում, երբ պայմանագրային գործընկերը չի կատարում իր պարտավորությունները, որի հետևանքով Ընկերությունը կարող է ֆինանսական կորուստներ կրել:

Ընկերության պարտքային ռիսկն առաջանում է ֆինանսական ակտիվներից՝ ներառյալ բանկերում պահվող դրամական միջոցները և առևտրային և այլ դեբիտորական պարտքերը:

Պարտքային ռիսկը կառավարվում է խմբային հիմունքով՝ ելնելով Ընկերության պարտքային ռիսկի կառավարման քաղաքականությունից և ընթացակարգերից:

Բանկերում պահվող դրամական միջոցների մնացորդների և ժամկետային ավանդների մասով պարտքային ռիսկը կառավարվում է դրամական միջոցները տարբեր բարձր վարկանիշ ունեցող առևտրային բանկերում պահելու միջոցով: Ընկերությունը շարունակաբար հսկում է հաճախորդների պարտքի հատկանիշները՝ ելնելով պարտքի վարկանիշային քարտից: Եթե հնարավոր է, օգտագործվում են նաև հաճախորդների վերաբերյալ արտաքին վարկանիշներ կամ հաշվետվություններ:

Ընկերության քաղաքականությունն է համագործակցել միայն վճարունակ գործընկերների հետ: Պարտքերի վերադարձելիության միջին ժամկետը կազմում է 5 օր (2024թ.՝ 19 օր):

Ընթացիկ պարտքային ռիսկը կառավարվում է պարբերական ժամկետային վերլուծություններ կատարելու միջոցով՝ համատեղելով յուրաքանչյուր հաճախորդի համար դեբիտորական պարտքի սահմանաչափի որոշմամբ: Առևտրային դեբիտորական պարտքերը պատկանում են հիմնականում մեկ հաճախորդի, որը գործում է Ռուսաստանի Դաշնությունում: Առևտրային դեբիտորական պարտքերի համար Ընկերությունը գրավ չի վերցնում:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Ընկերությունը առևտրային դեբիտորական պարտքերի համար հաշվետու ժամանակաշրջանում կիրառել է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոդելը. «գործողության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում սպասվող պարտքային կորուստների ճանաչում», քանի որ այս դեբիտորները չեն պարունակում էական ֆինանսական բաղադրիչ: Սպասվող պարտքային կորուստները չափելիս առևտրային դեբիտորական պարտքերը գնահատվում են խմբային հիմունքով, քանի որ դրանք ունեն պարտքային ռիսկի ընդհանուր բնորոշումներ: Դրանք խմբավորվել են՝ ելնելով ժամկետանց օրերից և հաճախորդների աշխարհագրական դիրքից:

Սպասվող կորուստների դրույքաչափերը հաշվարկվել են՝ հիմնվելով 2025թ. դեկտեմբերի 31-ին և 2024թ. դեկտեմբերի 31-ին նախորդող 48 ամսվա ընթացքում վաճառքի դիմաց ստացված վճարումների պատկերի վրա, ինչպես նաև հաշվի առնելով այդ ժամանակահատվածում ձևավորված պատմական պարտքային կորուստները: Այս պատմական դրույքաչափերը ճշգրտվում են, որպեսզի արտացոլեն ընթացիկ և ապագային վերաբերող մակրոտնտեսական գործոնները, որոնք ազդեցություն ունեն հաճախորդի՝ չվճարված մնացորդը մարելու կարողության վրա: Ընկերությունը գնահատել է, որ ամենահամապատասխան գործոն են հանդիսանում հաճախորդների տեղակայման երկրների ազգային դրամական միավորի արժեզրկման մակարդակը, և ճշգրտում է կորուստների պատմական դրույքաչափերն այդ գործոնով պայմանավորված սպասվող փոփոխությունների չափով: Այնուամենայնիվ, հաշվի առնելով պարտքային ռիսկի կարճաժամկետ բնույթը՝ այս մակրոտնտեսական գործոնների ազդեցությունը հաշվետու ժամանակաշրջանում էական չէ:

Երբ հավանական չէ առևտրային դեբիտորական պարտքերի հավաքագրումը, դրանք դուրս են գրվում (ապաճանաչվում են): Հաշիվ-ապրանքագրի ամսաթվից հետո 180 օրվա ընթացքում վճարում չկատարելը և Ընկերության հետ այլընտրանքային վճարման վերաբերյալ համաձայնության չգալը համարվում է գումարի վերադարձման վերաբերյալ խելամիտ սպասումներ չունենալու համար հայտանիշ:

Արտարժութային ռիսկ

Ընկերությունը գործարքներ է իրականացնում արտարժույթով և, հետևաբար, ենթարկվում է արտարժույթի փոխարժեքային տատանումների ազդեցությանը:

Ընկերության գործարքների հիմնական մասն իրականացվում է ռուսական ռուբլով, ԱՄՆ դոլլարով և եվրոյով:

Արտարժույթի փոխարժեքային տատանումներից կախվածությունն առաջանում է Ընկերության արտերկրյա վաճառքներից և ձեռքբերումներից, ստացված փոխառություններից, որոնք ի սկզբանե արտահայտված են դոլլարով և ռուբլով Արտարժույթով արտահայտված ֆինանսական ակտիվներն ու պարտավորությունները, որոնք Ընկերությանը ենթարկում են արտարժութային ռիսկի, նկարագրված են ստորև:

Արտացոլված գումարներն իրենցից ներկայացնում են հիմնական ղեկավար անձնակազմին տրամադրված տվյալները, որոնք արտահայտված են հայկական դրամով՝ հաշվետու ժամանակաշրջանի վերջի ամսաթվի փոխարժեքով.

Հոդված
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	ԱՄՆ դոլար	Ռուբլի	Եվրո
Ֆինանսական ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	633	20,481	36
Տրված կանխավճարներ	2,228	1,862	3,943
Ընթացիկ հաշիվներ բանկերում՝ արտարժույթով	3,876	2,126	21
	6,737	**24,469**	**4,000**
Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ	-	(9,313,684)	-
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	(435,128)	(17,641)	(120,612)
Ստացված կանխավճարներ վաճառքների գծով	(3,822)	(158,264)	-
Որպես դեպոզիտ ստացված կանխավճարներ	-	(7,125)	-
	(438,950)	**(9,496,714)**	**(120,612)**
Զուտ արդյունք	**(432,213)**	**(9,472,245)**	**(116,612)**

Հոդված
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	ԱՄՆ դոլար	Ռուբլի	Եվրո
Ֆինանսական ակտիվներ			
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	24,944	123,812	3,442
Տրված կանխավճարներ	28,485	144,206	103,721
Ընթացիկ հաշիվներ բանկերում՝ արտարժույթով	630	126,678	370
	54,059	**394,696**	**107,533**
Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ	-	(5,097,396)	-
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	(1,287,852)	(21,089)	(53,527)
Ստացված կանխավճարներ վաճառքների գծով	-	(196,308)	-
Որպես դեպոզիտ ստացված կանխավճարներ	-	(9,322)	(411)
	(1,287,852)	**(5,324,115)**	**(53,938)**
Զուտ արդյունք	**(1,233,793)**	**(4,929,419)**	**53,595**

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է Ընկերության զգայունությունը՝ դոլլարի, ռուբլու, եվրոյի նկատմամբ դրամի 10% (2024թ.՝ 10%) աճին/նվազմանը: 10%-ը (2024թ.՝ 10%) ղեկավարության կողմից գնահատված փոխարժեքի հավանական փոփոխությունն է: Զգայունության վերլուծությունը ներառում է միայն արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների մնացորդները և ժամանակաշրջանի վերջում ճշգրտում է դրանց փոխարկումը՝ փոփոխելով փոխարժեքը 10%-ով (2024թ.՝ 10%):

Դրամի արժևորումը եվրոյի և ռուբլու նկատմամբ 10%-ով (2024թ.՝ 10%) կունենա հետևյալ ազդեցությունը.

	ԱՄՆ դոլարի ազդեցություն		Ռուբլու ազդեցություն		Եվրոյի ազդեցություն	
	2025թ. հազ. դրամ	**2024թ. հազ. դրամ**	**2025թ. հազ. դրամ**	**2024թ. հազ. դրամ**	**2025թ. հազ. դրամ**	**2024թ. հազ. դրամ**
Շահույթ կամ (վնաս)	(43,221)	(123,379)	(947,225)	(4,929,419)	(11,661)	53,595
	(43,221)	**(123,379)**	**(947,225)**	**(4,929,419)**	**(11,661)**	**53,595**

Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքային ռիսկը այն ռիսկն է, որ շուկայական տոկոսադրույքների փոփոխության արդյունքում կարող է ազդել Ընկերության ֆինանսական ծախսերի, եկամուտների, ակտիվների ու պարտավորությունների իրական արժեքի վրա: Ընկերությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունի 12% ֆիքսված տոկոսադրույքով կարճաժամկետ տոկոսային փոխառու միջոցներ, սակայն չունի լողացող տոկոսադրույքով փոխառու միջոցներ:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող սեփական միջոցների կառավարումից, ֆինանսական վճարներից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից: Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ (կամ համաձայնեցված միջոցներ), որպեսզի ողջամիտ ժամկետում կարողանա մարել սահմանված պարտավորությունները:

Ղեկավարությունը ստանում է 12 ամսվա դրամական միջոցների հոսքերի գծով ամսական կանխատեսումներ, ինչպես նաև մանրամասներ դրամական միջոցների մնացորդների մասին: Համաձայն հաշվետու տարեվերջի դրությամբ կատարված վերոնշյալ կանխատեսումների՝ ֆինանսական տարվա ընթացքում Ընկերությունը կունենա բավարար միջոցներ՝ ակնկալվող ողջամիտ ժամկետներում պարտավորությունները մարելու համար:

Կապիտալին վերաբերող բացահայտումներ

Ընկերությունն իր կապիտալը կառավարում է այնպես, որպեսզի ապահովի իր անընդհատ գործելու և առավելագույն շահույթ ստանալու հնարավորությունը:
Ընկերության կապիտալը ներառում է սեփական կապիտալի բոլոր տարրերը (այն է՝ կանոնադրական կապիտալ, էմիսիոն եկամուտ, չվերահսկող բաժնեմաս, չբաշխված եկամուտ և վերագնահատման պահուստ), բացի դրամական միջոցների հոսքերի հեջավորման գծով պահուստի գումարներից:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալն այնպես, որ

- կարողանա շարունակել իր գործունեությունը տեսանելի ապագայում (գործունեության անընդհատությունը)՝ բաժնետերերի և այլ շահառուների համար ապահովելով եկամուտներ և հատուցումներ,
- կարողանա բաժնետերերի համար ապահովել պատշաճ եկամուտ՝ ապրանքների և ծառայությունների գները սահմանելով ռիսկի մակարդակին համապատասխան:

Ընկերությունը սահմանում է անհրաժեշտ կապիտալի չափը գնահատված ռիսկերին համապատասխան: Ընկերությունը կառավարում է իր կապիտալի կառուցվածքը և կատարում ճշգրտումներ՝ տնտեսական պայմանների

փոփոխություններին և ակտիվների ռիսկերի բնույթին համապատասխան: Կապիտալի կառուցվածքը պահպանելու կամ ճշգրտելու նպատակով Ընկերությունը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվող շահաբաժինների չափը, վերադարձնել կապիտալը բաժնետերերին, թողարկել նոր բաժնետոմսեր կամ պարտքը նվազեցնելու նպատակով վաճառել ակտիվները:

5. Հասույթ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Ապրանքների վաճառքներից հասույթ	992	13,248
Աշխատանքների, ծառայությունների կատարումից հասույթ	7,333	28,718
Տոմսերի վաճառքից հասույթ	2,973,393	14,242,194
Բեռնափոխադրումներից հասույթ	168,089	418,415
Ուղեբեռներից հասույթ	29,469	107,509
Այլ ծառայությունների մատուցումից հասույթ	12,969	48,796
	3,192,245	**14,858,880**

6. Ինքնարժեք

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Օդանավի և օդանավակայանում սպասարկման ծառայություններ	(2,339,283)	(6,821,636)
Օգտագործման իրավունքի գծով ակտիվի մաշվածություն	(781,256)	(2,002,412)
Օգտագործման իրավունքի գծով ակտիվի դուրսգրումից ծախսեր	(1,943,486)	-
Վառելիքի գծով ծախս	(1,201,251)	(3,616,933)
Վաճառված ապրանքների ինքնարժեք	(2,392)	(32,077)
	(6,267,668)	**(12,473,058)**

7. Այլ եկամուտ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Եկամուտներ տույժերից, տուգանքներից	-	7
Եկամուտ պարտքի ներումից	1,721,842	-
Նյութական վնասի փոխհատուցումից եկամուտներ	-	2,113
Գույքագրմամբ հայտնաբերված ավելցուկ	2,994	1,868
Գործառնական այլ եկամուտներ	972	18,006
Տոկոսային եկամուտներ	6	35
	1,725,814	**22,029**

8. Իրացման ծախսեր

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Կոմիսիոն և կոնսիգնացիոն վարձատրություն	(363,916)	(350,776)
Տուրքի գծով ծախս	(1,054,670)	(974,805)
Աշխատակիցների այլ ծախսերի փոխհատուցում	(47,881)	(18,580)
Հիմնական միջոցների մաշվածության, դրանց նորոգման և սպասարկման գծով ծախսեր	(179,829)	(101,589)
Արտադրանքի, ապրանքների իրացման տրանսպորտային և ապահովագրական ծախսեր	(778,184)	(648,963)
Մարկետինգի և գովազդի ծախսեր	(605)	(160)
	(2,425,085)	**(2,094,873)**

9. Վարչական ծախսեր

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Աշխատանքի վճարման ծախսեր, սոցիալական ապահովության վճարներ	(498,992)	(1,317,168)
Հիմնական միջոցների մաշվածության , դրանց նորոգման և սպասարկման ծախսեր	(5,562)	(7,497)
Ծառայողական ավտոմեքենաների վառելիքի գծով ծախս	(1,245)	(1,043)
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր	(3,226)	(23,743)
Գրասենյակային և կոմունալ ծախսեր	(14,810)	(48,504)
Փոստի և հեռահաղորդակցության ծախսեր	(3,592)	(39,305)
Աուդիտորական և խորհրդատվական ծախսեր	(22,940)	(29,623)
Բանկային ծառայությունների ծախսեր	(12,889)	(52,777)
Չփոխհատուցվող հարկերից ծախսեր	(6,457)	(27,044)
Վարչական այլ ծախսեր	(17,642)	(28,146)
	(587,355)	**(1,574,850)**

10. Այլ ծախսեր

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Ծախսեր տույժերից, տուգանքներից, դատական ծախսեր	(6,336)	(4,315)
Արժեքների պակասորդներ և փչացումից կորուստներ, արտադրական ծախսումների սովորական (նորմալ) մակարդակը գերազանցող ծախսեր	(9,909)	(3,411)
Գործառնական այլ ծախսեր	(8,971)	(21,814)
	(25,216)	**(29,540)**

11. Ֆինանսական ծախսեր

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Ֆինանսական ծախսեր փոխառությունների գծով	(867,385)	(372,575)
Ֆինանսական ծախսեր ֆինանսական վարձակալության գծով	(268,399)	(786,029)
	(1,135,784)	**(1,158,604)**

12. Այլ ֆինանսական արդյունքներ

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Արտարժույթի փոխանակումից եկամուտներ	297	4,857
Արտարժույթի փոխարկումից ծախսեր	(41,546)	(154,496)
	(41,249)	**(149,639)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից օգուտներ	991,593	2,245,490
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններից կորուստներ	(2,564,984)	(1,441,561)
	(1,573,391)	**803,929**
	(1,614,640)	**654,290**

Փոխարժեքային տարբերությունից օգուտ (վնաս)՝	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	3,842	(28,759)
Տրված կանխավճարներ	(6,557)	4,442
Տրված փոխառություններ	-	-
Ընթացիկ հաշիվներ բանկերում՝ արտարժույթով	14,595	(59,438)
Դրամական միջոցներ ճանապարհին	-	22
Երկարաժամկետ փոխառությունների գծով վճարվելիք համախառն գումարներ	(1,673,388)	700,344
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	88,623	117,933
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	-	67,781
Որպես դեպոզիտ ստացված կանխավճարներ	(434)	-
Ստացված կանխավճարներ վաճառքների գծով	(72)	1,604
Ընդամենը այլ ֆինանսական արդյունք	**(1,573,391)**	**803,929**

13. Շահութահարկ

Շահութահարկի գծով ծախս / (փոխհատուցում)

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Շահութահարկի գծով ծախս	-	-
Հետաձգված հարկ (տե՛ս Ծնթ. 18)	846,523	496,833
	846,523	**496,833**

Հաշվետու տարվա համար ՀՀ հարկային օրենսգրքով շահութահարկի դրույքաչափը սահմանված է 18% (2024թ.՝ 18%): Ընթացիկ տարվա շահութահարկը և հետաձգված հարկը հաշվարկվել է 18% տոկոսադրույքով:

Հարկային դրույքի համադրում

	հազ. դրամ	2025թ. Արդյունավետ հարկային դրույքաչափ %	հազ. դրամ	2024թ. Արդյունավետ հարկային դրույքաչափ %
Շահույթ (վնաս) հարկումից առաջ	(5,467,076)		(2,125,938)	
Շահութահարկ	(984,074)	18%	(382,669)	18%
Հարկային նպատակով չնվազեցվող ծախսեր (չհարկվող եկամուտներ)՝ զուտ	984,074	-18%	382,669	-18%
Ընդամենը հարկային ծախս (փոխհատուցում)	**-**	**0%**	**-**	**0%**

Հայաստանի Հանրապետությունում ՖՀՄՍ-ի և հարկային օրենսդրության միջև տարբերությունները հանգեցնում են ֆինանսական հաշվետվության նպատակներով ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքի և դրանց հարկային բազաների միջև ժամանակավոր տարբերությունների:

14. Պաշարներ

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Վառելիք	138	4,081
Պահեստամասեր	393,842	334,301
Ապրանքներ	8,696	93,422
Օդանավում սպառվող ապրանքներ	2,167	2,180
Գործիքներ, այլ ապրանքներ	65,916	54,577
	470,759	**488,561**

Պարտավորություններն ապահովելու համար Ընկերությունը չունի գրավադրված պաշարներ:

15. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Դեբիտորական պարտքեր վաճառքների գծով	21,149	185,513
Տրված կանխավճարներ	9,233	371,049
Դեբիտորական պարտքեր հարկերի և այլ պարտադիր վճարների գծով	9,851	10,957
Դեբիտորական պարտքեր աշխատավարձի վճարման գծով	465	3,720
Դեբիտորական պարտքեր աշխատակիցների հետ այլ գործառնությունների գծով	8,145	9,467
	48,843	**580,706**

Բոլոր գումարները կարճաժամկետ են: Առևտրային դեբիտորական պարտքերի զուտ հաշվեկշռային արժեքը համարվում է իրական արժեքի խելամիտ գնահատում:

Տրված կանխավճարները հիմնականում ներկայացնում են արտասահմանյան մատակարարներին տարբեր պաշարների ձեռքբերման համար վճարված գումարները:

Ապրանքների վաճառքից առաջացած առևտրային դեբիտորական պարտքի միջին տևողությունը կազմում է 2 օր (2024թ.՝ 5 օր): Առևտրային դեբիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում:

Ղեկավարությունը հավատացած է, որ պետական բյուջեից դեբիտորական պարտքերն ամբողջովին ենթակա են վերականգնման:

Ընկերության բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերը վերանայվել են արժեզրկման հայտանիշների առկայության ստուգման համար:

Պարտքային ռիսկի և ակնկալվող պարտքային ռիսկի վերլուծության վերաբերյալ բացահայտումները ներկայացված են Ծանոթագրություն 4-ում: Արժեզրկման պահուստի ընթացիկ և համադրելի գումարները հաշվարկելիս կիրառվել է ՖՀՄՍ 9-ի՝ ակնկալվող կորուստների մոդելը:

16. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Ընթացիկ հաշիվներ բանկերում՝ ՀՀ դրամով	2,017	28,425
Ընթացիկ հաշիվներ բանկերում՝ արտարժույթով	6,022	127,678
Ընդամենը դրամական միջոցներ	**8,039**	**156,103**

Բանկերում մնացորդների արժույթների բացահայտման համար տե՛ս Ծնթ. 4-ը:

17. Հիմնական միջոցներ և ոչ նյութական ակտիվներ

հազ. դրամ

Հիմնական Միջոցներ	Մեքենաներ և սարքավո-րումներ	Տրանսպոր-տային միջոցներ	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	Համակարգչային տեխնիկա	Օգտագործման իրավունքի գծով ակտիվ	Այլ հիմնական միջոցներ	Ընդամենը
Սկզբնական կամ վերագնահատված արժեք							
Մնացորդն առ 01.01.2024թ.	**3,016**	**12,250**	**5,138**	**8,956**	**8,713,148**	**14,112**	**8,756,620**
Ավելացումներ	1,227	-	564	12,223	-	605	14,619
Պակասեցումներ	(162)	-	-	(141)	-	-	(303)
Մնացորդն առ 31.12.2024թ.	**4,081**	**12,250**	**5,702**	**21,038**	**8,713,148**	**14,717**	**8,770,936**
Ավելացումներ	-	-	1,338	293	45,733	1,636	49,000
Պակասեցումներ		-	-		(8,713,148)	-	(8,713,148)
Մնացորդն առ 31.12.2025թ.	**4,081**	**12,250**	**7,040**	**21,331**	**45,733**	**16,353**	**106,788**
Կուտակված մաշվածություն							
Մնացորդն առ 01.01.2024թ.	**(1,404)**	**(951)**	**(2,326)**	**(2,747)**	**(1,649,237)**	**(993)**	**(1,657,658)**
Տարվա ծախս	(927)	(1,531)	(750)	(5,172)	(2,002,412)	(1,873)	(2,012,665)
Պակասեցումներ	162	-	-	72		-	234
Մնացորդն առ 31.12.2024թ.	**(2,169)**	**(2,482)**	**(3,076)**	**(7,847)**	**(3,651,649)**	**(2,866)**	**(3,670,089)**
Տարվա ծախս	(845)	(1,531)	(803)	(6,495)	(781,256)	(3,496)	(794,426)
Պակասեցումներ		-	-		4,432,905	-	4,432,905
Մնացորդն առ 31.12.2025թ.	**(3,014)**	**(4,013)**	**(3,879)**	**(14,342)**	**-**	**(6,362)**	**(31,610)**
Զուտ հաշվեկշռային արժեք							
Մնացորդն առ 01.01.2024թ.	**1,612**	**11,299**	**2,812**	**6,209**	**7,063,911**	**13,119**	**7,098,962**
Մնացորդն առ 31.12.2024թ.	**1,912**	**9,768**	**2,626**	**13,191**	**5,061,499**	**11,851**	**5,100,847**
Մնացորդն առ 31.12.2025թ.	**1,067**	**8,237**	**3,161**	**6,989**	**45,733**	**9,991**	**75,178**

հազ. դրամ

Ոչ նյութական ակտիվներ	Համակարգչային ծրագրեր	Արտոնագրեր, լիցենզիաներ և վստահագրեր (ֆրանշիզներ)	Այլ ոչ նյութական ակտիվներ	Ընդամենը
Սկզբնական կամ վերագնահատված արժեք				
Մնացորդն առ 01.01.2024թ.	**14,821**	**2,677**	**125**	**17,623**
Ավելացումներ	313	729	6,131	7,173
Պակասեցումներ	-	-	-	-
Մնացորդն առ 31.12.2024թ.	**15,134**	**3,406**	**6,256**	**24,796**
Ավելացումներ	-	570	143	713
Պակասեցումներ	-	-	-	-
Մնացորդն առ 31.12.2025թ.	**15,134**	**3,976**	**6,399**	**25,509**
Կուտակված մաշվածություն				
Մնացորդն առ 01.01.2024թ.	**(1,721)**	**(273)**	**-**	**(1,994)**
Տարվա ծախս	(1,609)	(744)	(449)	(2,802)
Պակասեցումներ	-	-	-	-
Մնացորդն առ 31.12.2024թ.	**(3,330)**	**(1,017)**	**(449)**	**(4,796)**
Տարվա ծախս	(1,454)	(854)	(627)	(2,935)
Պակասեցումներ	-	-	-	-
Մնացորդն առ 31.12.2025թ.	**(4,784)**	**(1,871)**	**(1,076)**	**(7,731)**
Զուտ հաշվեկշռային արժեք				
Մնացորդն առ 01.01.2024թ.	**13,100**	**2,404**	**125**	**15,629**
Մնացորդն առ 31.12.2024թ.	**11,804**	**2,389**	**5,807**	**20,000**
Մնացորդն առ 31.12.2025թ.	**10,350**	**2,105**	**5,323**	**17,778**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 7,500 հազ. դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 3,899 հազ. դրամ) սկզբնական արժեք ունեցող հիմնական միջոցները հաշվառվել են զրո հաշվեկշռային արժեքով:

Ժամանակավորապես շահագործման մեջ չգտնվող հիմնական միջոցներ 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չեն եղել (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ նույպես): Այս միավորների գծով մաշվածություն չի հաշվարկվում:

18. Հետաձգված հարկ

Հետաձգված հարկերի շարժը ներկայացված է ստորև.

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդ	**431,748**	**(65,085)**
Շահույթում կամ վնասում ճանաչված (ծախս)/փոխհատուցում (տե՛ս Ծնթ. 12)	846,523	496,833
Տարեվերջի մնացորդ	**1,278,271**	**431,748**

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

հազ. դրամ

	2025թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված	2025թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	554,656	(554,656)	-
Կուտակված հարկային վնաս	780,668	495,242	1,275,910
Վաստկած արձակուրդայինի գծով պահուստ	7,494	(5,133)	2,361
	1,342,818	**(64,547)**	**1,278,271**
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Օգտագործման իրավունքի գծով ակտիվ	(911,070)	911,070	-
Կուտակված վնաս	-		-
	(911,070)	**911,070**	**-**
Զուտ արդյունք-հետաձգված հարկային ակտիվներ	**431,748**	**846,523**	**1,278,271**

2024թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա հետաձգված հարկերը խմբավորված են հետևյալ կերպ.

հազ. դրամ

	2024թ. հունվարի 1	Շահույթում կամ վնասում ճանաչված	2024թ. դեկտեմբերի 31
Հետաձգված հարկային ակտիվներ			
Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ	1,091,080	(536,424)	554,656
Կուտակված հարկային վնաս	106,833	673,835	780,668
Վաստկած արձակուրդայինի գծով պահուստ	8,506	(1,012)	7,494
	1,206,419	**136,399**	**1,342,818**
Հետաձգված հարկային պարտավորություններ			
Օգտագործման իրավունքի գծով ակտիվ	(1,271,504)	360,434	(911,070)
	-		-
	(1,271,504)	**360,434**	**(911,070)**
Զուտ արդյունք-հետաձգված հարկային ակտիվներ (պարտավորություններ)	**(65,085)**	**496,833**	**431,748**

19. Վարկեր և փոխառություններ

	Ընթացիկ	
	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Ստացված փոխառություններ ոչ ֆինանսական կազմակերպություններից	9,313,684	5,097,396
	9,313,684	**5,097,396**

				Մնացորդ			
				2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ		2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	
Անվանում	**Մայր գումարը ստացման արժույթով**	**Արժույթ**	**Պայմանագրային տոկոսադրույք**	**Մայր գումար**	**Տոկոս**	**Մայր գումար**	**Տոկոս**
Սեվերնի Վետեր ՍՊԸ	1,570,500,000	ՌԴ ռուբլի	12%	9,313,684	867,385	5,097,396	372,575
				9,313,684	**867,385**	**5,097,396**	**372,575**

20. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Կրեդիտորական պարտքեր գնումների գծով	575,643	1,928,311
Ստացված կանխավճարներ վաճառքների գծով	162,086	196,760
Որպես դեպոզիտ ստացված կանխավճարներ	7,125	19,933
Կրեդիտորական պարտքեր բյուջեին հարկերի և այլ պարտադիր վճարների գծով	3,106	34,266
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի վճարման գծով	-	7,813
Կրեդիտորական պարտքեր աշխատակիցներին այլ գործառնությունների գծով	-	20
Աշխատակիցների արձակուրդային պահուստ	41,631	41,631
	789,591	**2,228,734**

Ապրանքների ձեռքբերման գծով առաջացած պարտավորությունների մարման միջին տևողությունը կազմում է 30 օր (2024թ.՝ 47 օր): Առևտրային կրեդիտորական պարտքերի գծով տոկոսներ չեն հաշվարկվում: Ընկերությունն ունի ֆինանսական ռիսկի կառավարման քաղաքականություններ, որոնք ապահովում են բոլոր պարտավորությունների ժամանակին կատարում:

21. Ֆինանսական վարձակալության գծով պարտավորություններ

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Սկզբնական մնացորդ	3,081,422	6,061,553
Ավելացում	45,733	-
Պակասեցում	(3,081,422)	(2,980,131)
Վերջնական մնացորդ	45,733	3,081,422
Չկրած տոկոսային ծախսեր	8,711	1,209,894
Ընդամենը վճարման ենթակա վարձավճար	54,444	4,291,316
Ըստ մարման ժամկետների՝		
մինչև 1 տարի	18,667	1,877,018
1-ից 5 տարի	27,066	1,204,404
Ընդամենը	45,733	3,081,422

22. Սեփական կապիտալ

Բաժնետիրական կապիտալ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության սեփական կապիտալը կազմում է հազար դրամ, որը բաժանված է 100 բաժնեմասի, որոնցից 10-ը պատկանում են Հայաստանի Հանրապետության քաղաքացի Արարատ Սուրենի Սարգսյանին, 24-ը՝ Բուլղարիայի Հանրապետության քաղաքացի Ռոսեն Բոյանովին, 22-ը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի Հերմինե Հայկազի Հովհաննիսյանին, 19-ը՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացի Միխայիլ Արթուրի Ասրիյանին, իսկ 25-ը՝ Շվեյցարական Համադաշնության քաղաքացի Օզ Յակուպխանոգուլարինդանին:

Շահաբաժիններ

Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են ՖՀՄՍ-ների համաձայն Ընկերության պատրաստած ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ չեն հայտարարվել և չեն վճարվել շահաբաժիններ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ նույնպես):

23. Կապակցված կողմեր

Ընկերության կապակցված կողմերը ներառում են հիմնադիրը, հիմնական ղեկավար անձնակազմը, համատեղ ձեռնարկությունները և այլն, ինչպես նկարագրված է ստորև:

Ընկերության հետ կապակցված կողմ են հանդիսանում ընկերության մասնակիցները, խորհրդի անդամները, գործադիր մարմինը՝ տնօրենը, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամները՝

Կապակցված կողմի անունը	Կապի բնույթը
Արարատ Սարգսյան	Բաժնետեր (10%), Գլխավոր տնօրեն
Միխայիլ Ասրիյան	Բաժնետեր (19%)
Հերմինե Հովհաննիսյան	Բաժնետեր (22%), ֆինանսների վերահսկող
Ռոսեն Բոյանով	Բաժնետեր (24%)
Օզ Յակուպխանոգուլարինդան	Բաժնետեր (25%)
Ալիսա Սարգսյան	Գլխավոր տնօրենի ընտանիքի անդամ
Արթուր Սարգսյան	Գլխավոր տնօրենի ընտանիքի անդամ
Սարգիս Սարգսյան	Գլխավոր տնօրենի ընտանիքի անդամ
Անտոն Մատտիս	Խարհրդի անդամ, Կոմերցիոն տնօրեն

Ժամանակաշրջանի ընթացքում Ընկերությունը իրականացրել է հետևյալ գործարքները կապակցված կողմերի հետ.

հազ.դրամ	2025	
	Վճարված աշխատավարձ	**Առհաշիվ տրված գումարներ**
Արարատ Սարգսյան	37,934	97
Հերմինե Հովհաննիսյան	4,807	-
Ալիսա Սարգսյան	4,949	-
Արթուր Սարգսյան	13,653	130
Սարգիս Սարգսյան	13,694	168
Անտոն Մատտիս	5,039	-
	80,076	395

հազ.դրամ

	2024	
	Վճարված աշխատավարձ	**Առհաշիվ տրված գումարներ**
Արարատ Սարգսյան	44,934	36
Հերմինե Հովհաննիսյան	9,751	6,590
Ալիսա Սարգսյան	16,200	190
Արթուր Սարգսյան	16,166	71
Սարգիս Սարգսյան	19,902	2,202
Անտոն Մատտիս	14,982	-
	121,935	9,089

Գործարքներ ղեկավարության հետ

Հիմնական ղեկավար անձնակազմը ժամանակաշրջանի ընթացքում ստացել է հետևյալ վարձատրությունը, որը ներառված է «Հատուցումներ աշխատակիցներին» հոդվածում

	31.12.2025թ. հազ. դրամ	**31.12.2024թ. հազ. դրամ**
Աշխատավարձ և պարգևատրումներ	37,934	44,934

24. Պայմանական պարտավորություններ

Ֆինանսական երաշխիքներ

Ընկերությունը հաշվետու ամսաթվի դրությամբ ֆինանսական երաշխիքներ չի ունեցել :

Ապահովագրություն

Հայաստանի Հանրապետությունում ապահովագրական համակարգը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են մյուս երկրներում, դեռ չեն կիրառվում Հայաստանում: Ընկերության գույքը ապահովագրված չէ: Այն ապահովագրված չէ գործունեության ընդհատման և երրորդ կողմերի նկատմամբ պարտավորությունների հանդեպ, որոնք կարող են առաջանալ գույքին կամ շրջակա միջավայրին վնաս հասցնելուց առաջացած Ընկերության տարածքում տեղի ունեցած պատահարներից կամ նրա գործունեությունից հասցված վնասից: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ էական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

Իրավական պարտավորություններ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը Ընկերությունը ներգրավված չէ այնպիսի դատական վարույթներում, որոնք կարող են էական ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի վրա:

Հարկային պարտավորություններ

Հայաստանի հարկային համակարգը, լինելով համեմատաբար նոր, բնորոշվում է օրենսդրության, պաշտոնական պարզաբանումների և դատական որոշումների հաճախակի փոփոխություններով, որոնք երբեմն հստակ չեն, հակասական են, ինչը ենթադրում է տարբեր մեկնաբանություններ: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են սահմանել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն առաջադրել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

2020թ. հունվարի 1-ից Հայաստանի Հանրապետությունում գործում է տրանսֆերային գնագոյացման օրենսդրությունը: Օրենսդրությունը գործում է 2020թ. և հաջորդ տարիների համար: Տրանսֆերային գնագոյացման տեղական կանոնները համանման են ՏՀԶԿ ուղեցույցներին, սակայն որոշակի հանգամանքներում առկա է անորոշություն հարկային

օրենսդրության գործնական կիրառման հետ կապված:

Տրանսֆերային գնագոյացման կանոնները կիրառելի են ստորև ներկայացված գործարքների նկատմամբ, եթե վերահսկվող գործարքի հանրագումարը հարկային տարում գերազանցում է 200 միլիոն դրամը.

- միջսահմանային գործարքներ կապակցված կողմերի միջև,
- միջսահմանային գործարքներ օֆշորային գոտիներում գրանցված ընկերությունների հետ՝ անկախ կապակցված կողմ լինելու հանգամանքից,
- կապակցված կողմերի միջև երկրի ներսում իրականացվող որոշ գործարքներ, որոնք սահմանված են ՀՀ հարկային օրենսգրքով:

Քանի որ հարկային մարմինները և դատարանները չունեն տրանսֆերային գնագոյացման կանոնների կիրառման փորձ, դժվար է կանխատեսել տրանսֆերային գնագոյացման նոր կանոնների ազդեցությունն այս ֆինանսական հաշվետվությունների վրա:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են առաջացնել այլ երկրների ռիսկերի համեմատ շատ ավելի մեծ ռիսկեր: Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխանաբար է ճանաչել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի կիրառելի հարկային օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատական որոշումների իր մեկնաբանությունների հիման վրա: Այնուամենայնիվ, համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են էական լինել այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

25. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի չեն ունեցել դեպքեր, որոնք կարող են ազդել ֆինանսական հաշվետվությունների հիման վրա օգտագործողների կայացրած տնտեսական որոշումների վրա:

Ռազմական գործողություններ Ռուսաստանի Դաշնության և Ուկրաինայի միջև

2022թ. փետրվարի 24-ին Ռուսաստանը ռազմական գործողություններ սկսեց Ուկրաինայի դեմ: Ռուսաստանին դիմագրավելու նպատակով ԵՄ-ն, ԱՄՆ-ը և աշխարհի շատ երկրներ տնտեսական և քաղաքական պատժամիջոցներ են հայտարարել և կիրառում, որի արդյունքում Ռուսաստանի տնտեսությունը նշանակալի խնդիրների առաջ է հայտնվել: Ներկայումս պատերազմի ընթացքը և պատժամիջոցների ազդեցության հետևանքների ծավալը անկանխատեսելի են: Հաշվի առնելով Հայաստանի տնտեսության և ներդրումային դաշտի համար Ռուսաստանի քաղաքական և տնտեսական ազդեցությունը, ինչպես նաև այն, որ Հայաստանը ԵԱՏՄ կառույցի անդամ է, ստեղծված իրավիճակն անուղղակիորեն կարող է ազդել Հայաստանի ֆինանսական և տնտեսական համակարգերի կայունության վրա:

Մինչև այժմ շարունակվող գործողությունները հսկայական ազդեցություն ունեն ամբողջ աշխարհի ֆինանսական և ներդրումային դաշտի վրա, մասնավորապես՝ արտարժութային փոխարժեքների տատանումները և ստեղծված անորոշությունը կարող է ազդեցություն ունենալ Ընկերության ֆինանսական ակտիվների և պարտավորությունների վրա: Հաշվի առնելով նշված հանգամանքների և նրանց ազդեցության անկանխատեսելիությունը՝ Ընկերությունն այս պահին դժվարանում է գնահատել վերջինիս ազդեցությունն իր հետագա գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի և իրացվելիության վրա:

Պատերազմական գործողություններ Հայաստանի Հանրապետության սահմանին

2022թ. սեպտեմբերի 13-ին Ադրբեջանը սկսեց լայնածավալ մարտական գործողություններ Հայաստանի Հանրապետության սուվերեն տարածքի ուղղությամբ: Սեպտեմբերի 16-ին ժամանակավոր հրադադար հայտարարելուց հետո պարբերաբար տեղի են ունենում հարձակումներ: Բանակցային գործընթացներն ընթացքի մեջ են, և Ընկերությունն այս պահին դժվարանում է գնահատել վերջինիս ազդեցությունն իր հետագա գործունեության արդյունքների, ֆինանսական վիճակի և իրացվելիության վրա:

26. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Հասույթի ճանաչում

Ընկերությունը ճանաչում է հասույթը հետևյալ հիմնական աղբյուրներից՝

Չվաճուցակին ենթակա (չենթարկվող) օդային տրանսպորտի գործունեություն, օդային տրանսպորտի այլ օժանդակ գործունեություն:

Որոշելու համար, թե արդյոք անհրաժեշտ է ճանաչել հասույթ, թե ոչ, Ընկերությունն առաջնորդվում է 5-քայլի գործընթացով.

1. Հաճախորդի հետ պայմանագրի բացահայտում
2. Կատարման պարտականությունների բացահայտում
3. Գործարքի գնի որոշում
4. Կատարման պարտականությունների միջև գործարքի գնի բաշխում
5. Հասույթի ճանաչում, երբ կատարման պարտականությունները բավարարված են

Հասույթը ճանաչվում է կամ ժամանակի մեջ որևէ պահին կամ ժամանակի ընթացքում, երբ Ընկերությունը բավարարում է կատարման իր պարտականությունը՝ հաճախորդին փոխանցելով խոստացված ապրանքը կամ ծառայությունը:

Ընկերությունը ճանաչում է դեռևս չբավարարված կատարման պարտականությունների համար ստացված հատուցման դիմաց պայմանագրային պարտավորությունները և արտացոլում է այդ գումարները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում որպես հաճախորդներից ստացված կանխավճարներ (տես՝ Ծնթ. 5-ը): Նման ձևով, եթե Ընկերությունը բավարարում է կատարման պարտականությունը միչև հատուցման ստանալը, Ընկերությունը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է կամ պայմանագրային ակտիվ, կամ դեբիտորական պարտք՝ կախված նրանից, թե արդյոք հատուցման ժամկետը լրանալուց առաջ անհրաժեշտ է միայն որոշակի ժամանակ, թե այլ լրացուցիչ պայման:

Ֆինանսական ակտիվներ

Ընկերությունն իր ֆինանսական ակտիվները դասակարգում է ներքո ներկայացված կատեգորիաներից մեկով կախված այն նպատակից, որի համար ակտիվը ձեռք է բերվել:

Ամորտիզացված արժեքով չափվող

Այս ակտիվները հիմնականում առաջանում են հաճախորդներին ապրանքների և ծառայությունների մատուցումից (օրինակ ՝առևտրային դեբիտորական պարտքեր), ինչպես նաև ներառում են այլ ֆինանսական ակտիվներ, որոնց նպատակն է այդ ակտիվները պահել, պայմանագրային դրամական հոսքերի հավաքման նպատակով, իսկ պայմանագրային դրամական միջոցների հոսքերը իրենցից զուտ ներկայացնում են մայր գումարի և տոկոսների վճարումներ: Դրանք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ գումարած գործարքների գծով ծախսումները, որոնք ուղղակիորեն կապված են դրանց ձեռքբերման կամ թողարկման հետ, և հետագայում դրանք չափվում են ամորտիզացված արժեքով, օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը՝ նվազեցնելով արժեզրկման պահուստը:

Ընթացիկ և ոչ ընթացիկ առևտրային դեբիտորական պարտքերի գծով վճարունակության ակնկալվող կորուստները գնահատելու նպատակով կիրառում է ՖՀՄՍ 9-ի պարզեցված մոտեցումը՝ օգտագործելով ողջ ժամկետի համար վճարունակության ակնկալվող կորուստների գնահատում: Այս գործընթացում գնահատվում է առևտրային դեբիտորական պարտքերի չվճարման հավանականությունը: Այդ հավանականությունը, այնուհետև, բազմապատկվում է կանխատեսվող կորստի գումարի չափով՝ առևտրային դեբիտորական պարտքերի ողջ ժամկետի գծով ակնկալվող կորստի գնահատման նպատակով: Առևտրային դեբիտորական պարտքերի անհավաքելիության հաստատման դեպքում, ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը հաշվանցվում է այդ ակտիվի գծով ձևավորված պահուստի հաշվին: Կապակցված կողմերից դեբիտորական պարտքերի և կապակցված կողմերին տրամադրված փոխառությունների արժեզրկման պահուստները ճանաչվում են վճարունակության կորուստների ակնկալվող մոդելի հիման վրա: Պահուստի գումարի որոշման մեթոդաբանությունը հիմնված է այն հանգամանքի վրա, թե ֆինանսական ակտիվի սկզբնական ճանաչման պահից հետո արդյոք եղել է վճարունակության ռիսկի զգալի աճ: Այն ակտիվների համար, որոնց սկզբնական ճանաչման պահից հետո չի եղել վճարունակության ռիսկի զգալի աճ, ճանաչվում է վճարունակության ռիսկի տասներկու ամսվա ակնկալվող կորուստ՝ համախառն տոկոսային եկամտի հետ միասին: Այն ակտիվների համար, որոնց վճարունակության ռիսկը զգալիորեն աճել է, ճանաչվում է ողջ ժամանակաշրջանի համար վճարունակության ռիսկի ակնկալվող կորուստ՝ համախառն տոկոսային եկամտի հետ միասին:

Ընկերության ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ներառում են առևտրային և այլ դեբիտորական պարտքեր, ինչպես նաև դրամական միջոցները և դրանց համարժեքները: Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են դրամական միջոցներ, ցպահանջ ավանդներ բանկերում, այլ կարճաժամկետ բարձր իրացվելի ներդրումներ, որոնց մարման սկզբնական

ժամկետը չի գերազանցում երեք ամիսը, ինչպես նաև դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվության նպատակով՝ բանկային օվերդրաֆտները: Բանկային օվերդրաֆտները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են ընթացիկ պարտավորություններում վարկերի և փոխառությունների ներքո:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերությունն իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է երկու կատեգորիայի՝ պարտավորության ձեռքբերման նպատակին համապատասխան:

Ստորև ներկայացված է Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը հաշվեկշռի ամսաթվին առկա յուրաքանչյուր կատեգորիայի համար, բացառությամբ հեջավորման պայմանը բավարարող ֆինանսական պարտավորությունների:

Այլ ֆինանսական պարտավորություններ

Այլ ֆինանսական պարտավորությունները ներառում են հետևյալը՝

- Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ հանած դրանց ստացմանն ուղղակիորեն վերագրելի ծախսումները: Ժամանակաշրջանի տոկոսային ծախսերը հաստատուն դրույքով ներառվում են ֆինանսական արդյունքների մասին հաշվետվության պարտավորություններ հոդվածում: Յուրաքանչյուր ֆինանսական պարտավորության նպատակներից ելնելով՝ տոկոսային ծախսերը ներառում են սկզբնական գործարքային ծախսերը, ետգնման վճարները, ինչպես նաև պարտավորությունների գծով վճարվելիք տոկոսները կամ արժեկտրոնները:

- Առևտրային կրեդիտորական և այլ կարճաժամկետ դրամային պարտավորությունները, որոնք սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ հետագայում՝ ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսային մեթոդը, եթե վերջինս էականորեն տարբերվում է սկզբնական արժեքից:

Արտարժույթով գործարքներ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթից բացի այլ արժույթով արտահայտված գործարքները ճանաչվում են գործարքի օրվա դրությամբ գերիշխող փոխարժեքով: Որոշակի ամսաթվի դրությամբ գերիշխող փոխարժեքների սահմանման դեպքում հղում է արվում ՀՀ կենտրոնական բանկի կայքում՝ www.cba.am, հրապարակված փոխարժեքներին: Դրամային ակտիվների և պարտավորությունների գծով փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, երբ դրանք առաջանում են, բացառությամբ արտերկրյա ստորաբաժանումներում զուտ ներդրումների հեջավորման պահանջներին համապատասխանող արտարժույթով արտահայտված փոխառությունների, որոնց դեպքում տարբերությունները ճանաչվում են այլ համապարփակ ֆինանսական արդյունքում և վերափոխարկման հետևանքով առաջացած փոխարժեքային տարբերությունների հետ միասին կուտակվում են արտարժույթի փոխանակման պահուստում:

Վաճառքի համար մատչելի դրամային ակտիվների վերափոխարկման արդյունքում առաջացած փոխարժեքային տարբերությունները համարվում են իրական արժեքի փոփոխության առանձին տարր և ճանաչվում են շահույթում կամ վնասում: Վաճառքի համար մատչելի ոչ դրամային ակտիվների գծով փոխարժեքային տարբերությունները կազմում են ֆինանսական գործիքի գծով ճանաչված ընդհանուր շահույթի կամ վնասի մասը:

Տարեվերջի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված պաշտոնական փոխարժեքները կազմում էին 381.36 դրամ 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ, 449.01 դրամ 1 եվրոյի նկատմամբ, 4.87 դրամ 1 ՌԴ ռուբլու նկատմամբ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 396.56 դրամ 1 ԱՄՆ դոլարի նկատմամբ, 413.89 դրամ 1 եվրոյի նկատմամբ, 3.71 դրամ 1 ՌԴ ռուբլու նկատմամբ):

Կանոնադրական կապիտալ

Ընկերության կողմից թողարկվող ֆինանսական գործիքները դասակարգվում են որպես սեփական կապիտալ միայն այնքանով, որքանով դրանք չեն համապատասխանում ֆինանսական պարտավորությունների կամ ֆինանսական ակտիվների սահմանումներին:

Ընկերության սովորական բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալի գործիքներ:

Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ կլինի հարկվող շահույթ, որի դիմաց այդ ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել: Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափվում են կիրառելով հարկային դրույքաչափեր, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ և ակնկալվում է, որ կկիրառվեն այն տարում, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/ (ակտիվները) կմարվեն/(կփոխհատուցվեն): Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավունք, և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են շահութահարկին, որը գանձվում է նույն հարկային մարմնի կողմից:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով: Հիմնական միջոցների միավորի ինքնարժեքը ձեռքբերման արժեքից բացի ընդգրկում է ուղղակիորեն վերագրելի ծախսումները և հիմնական միջոցների ապատեղակայման և քանդման սկզբնապես գնահատված անխուսափելի ծախսումների գումարը:

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կորուստները: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանք հաշվառվում են որպես հիմնական միջոցի առանձին միավորներ:

Հողամասերի գծով մաշվածություն չի հաշվարկվում: Կառուցման ընթացքում գտնվող ակտիվների գծով մաշվածությունը սկսվում է հաշվարկվել, երբ ակտիվները ավարտուն են և պատրաստ օգտագործման:

Հիմնական միջոցների այլ միավորների գծով մաշվածությունը հաշվարկվում է օգտակար ծառայության ընթացքում դրանց հաշվեկշռային արժեքի դուրս գրման համար՝ օգտագործելով հետևյալ տոկոսադրույքները.

Հիմնական միջոցներ	Օգտակար ծառայության ժամկետ	Հաշվարկման մեթոդ
Շենքեր և շինություններ	20 տարի	Գծային
Մեքենաներ և սարքավորում	5-15 տարի	Գծային
Տրանսպորտային միջոցներ	8 տարի	Գծային
Արտադրատնտեսական գույք	8 տարի	Գծային
Համակարգչային տեխնիկա	1 տարի	Գծային

Պաշարներ

Պաշարները սկզբնապես ճանաչվում են ինքնարժեքով, իսկ հետագայում չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, փոխարկման և պաշարները ներկայիս գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները:

Համանման բնույթ և կիրառություն ունեցող բոլոր պաշարների ինքնարժեքի որոշման համար կիրառվում է ինքնարժեքի միջին կշռված արժեքի բանաձևը:

Պահուստներ

Ընկերությունը ճանաչել է ժամկետի կամ գումարի առումով անորոշ պահուստներ: Որպես պահուստ ճանաչված գումարը պետք է իրենից ներկայացնի հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ ներկա պարտավորությունը մարելու համար պահանջվող ծախսումների լավագույն գնահատականը: Ձեղչման դրույքը պետք է լինի այն դրույքն՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները:

Հարկեր՝ Շահութահարկ

Ընթացիկ շահութահարկը տարվա համար հարկվող շահույթից վճարվելիք հարկն է, որը հաշվարկվում է հաշվապահական հաշվեկշռի ամսաթվին գործող կամ ըստ էության գործող հարկային դրույքաչափերով՝ հաշվի առնելով նախորդ տարիների համար վճարվելիք հարկերի ճշգրտումները:

Շահութահարկը որոշելիս հաշվառումն իրականացվում է հաշվապահական հաշվառումը և ֆինանսական հաշվետվությունները կարգավորող օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված սկզբունքների և կանոնների հիման վրա՝ հաշվի առնելով ՀՀ հարկային օրենսգրքի նախատեսված առանձնահատկությունները:

Շահութահարկի հաշվարկման իմաստով հարկատուի շահույթը համախառն եկամտի և ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված նվազեցումների դրական տարբերությունն է:

Հատուցումներ աշխատակիցներին

Կարճաժամկետ հատուցումներն աշխատակիցներին այն հատուցումներն են, որոնք ենթակա են մարման ամբողջությամբ տարեկան այն հաշվետու ժամանակաշրջանի ավարտից հետո տասներկու ամսվա ընթացքում, որում աշխատակիցները մատուցել են համապատասխան ծառայությունները: Դրանք ներառում են՝

(ա) աշխատավարձերը և պարգևավճարները,

(բ) վճարովի տարեկան արձակուրդները և անաշխատունակության հետ կապված վճարովի արձակուրդները:

Վճարովի բացակայություններ

Վճարովի բացակայությունների ձևով աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են հետևյալ կերպ.

(ա) կուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ աշխատակիցները ծառայություն են մատուցում, որն ավելացնում է իրենց իրավունքներն ապագա վճարովի բացակայությունների նկատմամբ,

(բ) չկուտակվող վճարովի բացակայությունների դեպքում՝ այն ժամանակ, երբ բացակայությունը տեղի է ունենում:

Պարգևավճարներ

Պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչվում են միայն այն ժամանակ, երբ Ընկերությունն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և պարտականությունը հնարավոր է արժանահավատորեն գնահատել:

Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Ընկերությունը վճարում չկատարելու ոչ մի իրատեսական այլընտրանք չունի

Հավելված 1 Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Առևտրային դեբիտորական պարտքեր	21,149	Ընթացիկ Կարճաժամկետ (12 ամսից պակաս) դեբիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	575,643	Ընթացիկ Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Չապահովված փոխառություններ	9,313,684	Չապահովված փոխառությունների գծով պարտավորությունների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ

Արարատ Սարգսյան
Տնօրեն

Սիմոն Աբրահամյան
Հաշվապահ/որակավորված աուդիտոր

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՎԻԱԼԻՆԵՐ» "АРМЯНСКИЕ АВИАЛИНИИ" "ARMENIAN AIRLINES" 02837242